

*Ժուռնալիստիկա. տեսության եւ պատմության հարցեր,  
պրակ Թ, Երևանի համալսարանի հրատարակչություն,  
2009թ., 70-77 էջեր*

*Նաղաշ Մարտիրոսյան  
Անահիտ Մենենձյան*

## **Թուևանյանի հրապարակախոսությունը արդի լրագրագիտության դիտանկյունից**

Լրագրագիտական միտքն այսօր ակտիվորեն մշակում է տեղեկատվական միջավայրի պաշտպանությանը միտված մեխանիզմներ: Տեսաբանների ուշադրության կենտրոնում է արտաքին և ներքին տեղեկատվական սպառնալիքներին դիմակայելու, գրոհները հակադարձելու, տեղեկատվական միջավայրը ի նպաստ քաղաքացու, պետության, հասարակության ուղղորդելու միջոցների ուսումնասիրությունը: Հովհաննես Թուևանյանի հրապարակախոսության վերարժևորումը արդի լրագրագիտության դիտանկյունից բավականին ուշագրավ միտումներ է բացահայտում: Մեծ գրողը, դեռևս մեկ դար առաջ, ներքին զգացողությամբ ըմբռնել և համարժեքորեն հակադարձել է հայ հասարակական, քաղաքական, գիտական մտքին սպառնացող վտանգները:

Թուևանյանի մի շարք հրապարակումներում առաջադրվում է գիտակից տեղեկատվական միջավայրի ձևավորման կարևոր բաղադրիչներից մեկի՝ *ինքնաճանաչողության խնդիրը*: Հրապարակախոսը ցավով արձանագրում է, որ հայը չի ճանաչում սեփական երկիրը, պատմությունը, ժողովրդին, գրականությունը, լեզուն: Մինչդեռ պաշտպանված տեղեկատվական միջավայր հնարավոր չէ կառուցել առանց այդ միջավայրի հնարավորությունները պարզելու: Սեփական ուժերի իրատեսական գիտակցումը այդ ուժերի նպատակային օգտագործման հիմնական նախապայմանն է: Սեփական թերությունների և առավելությունների գիտակցումը թույլ է տալիս աշխատել առաջինների վերացման ուղղությամբ և հարկ եղած դեպքում օգտագործել երկրորդները: Ինքնաճանաչողությունը կարևոր է նաև օտարին ըստ արժանվույն ներկայանալու, մեր երկրի անունն ու վարկը բարձր պահելու առումով. «Օտարը չի հարգի և սիրի մի ժողովրդի, որը ինքնուրույն պատկեր ու բովանդակություն չունի», - համոզված է Թուևանյանը: Ուշադրություն դարձնենք բառերին. սեփական երկիրը չճանաչողը մեծ գրողի համար պարզապես դատարկ է. չունի ո՛չ արտաքին, ո՛չ բովանդակություն, «հանդիսանում է միմիայն իր աղավաղումը»: Քաղաքակիրթ երկրներն այսօր լուրջ աշխատանքներ են տանում

իրենց պատմությունը, ավանդույթները, մշակույթը ըստ պատշաճի ներկայացնելու, լեզուն հնարավորինս օգտագործելի դարձնելու ուղղությամբ: Եվ դա չի արվում միայն տնտեսական նկատառումներով: Նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորումը միջազգային հանրության բարեհաճությունն ու համակրանքը ձեռք բերելու, այստեղ հնարավորինս նպաստավոր դիրք զբաղեցնելու միջոց է: Թեև որոշակի աշխատանքներ կան արված, այնուհանդերձ Հայաստանը դեռ շատ անելիքներ ունի ներկայանալու առումով՝ թե՛ իր ներսում, թե՛ իր սահմաններից դուրս: Դեռևս անցյալ դարասկզբին Թումանյանը շեշտադրում էր մասնավորապես «պատմության գիրք» ունենալու անհրաժեշտությունը. «Եվ դժբախտաբար դեռ մի կարգին պատմության գիրք էլ չունենք, թեև քիչ ժողովուրդ կունենա էնքան նյութ իր պատմության համար, ինչքան մենք ունենք»<sup>1</sup>: Իրեն հատուկ հեռատեսությամբ նա հասկանում էր, որ խնդիր ունենք ոչ միայն արտերկրում Հայաստան երկրի վարկանիշը բարձրացնելու, այլ նաև մեր պատմության կարևոր իրադարձությունները ճշմարտացի, մեզ համար բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու:

Ինքնաճանաչողության պակասը կարող է հանգեցնել ինքնագնահատականի նվազման. «Եվ ինչ զարմանք, որ էս դրության մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն ու դատարկությունը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարհամարհի իր ցեղը, իր անունից կամաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղի վերաբերյալ ամեն ստորություն, և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում՝ սկսած իրենից»<sup>2</sup>: Ցավոք, այս խոսքերը մարգարեական են: Հայկական լրատվամիջոցներն այսօր միշտ չէ, որ գործում են հօգուտ մեր պետության և ազգային մտածողության. անտեղի հղումներ են արվում մեր հանդեպ անբարեհաճ տրամադրված աղբյուրների, տպագրվում են հակահայկական միտում ունեցող հոդվածներ, նսենացվում են մեր ազգային խառնվածքը, ավանդական մտածելակերպը: Սրան զուգահեռ լայնորեն քարոզվում են արևմտյան ապրելակերպն ու մտածելակերպը: Օտար արժեքների գովազդը ենթագիտակցության մեջ պատկերացում է ձևավորում դրանց միանշանակորեն ճշմարտացի լինելու մասին, անվստահություն է առաջացնում սեփական ուժերի հանդեպ: Թումանյանը խստորեն քննադատում էր նման մոտեցումը, քանի որ համոզված էր՝ հայն առաջին հերթին պետք է ինքն իրեն հարգել սովորի, բարձրացնի ինքնագնահատականը, օգնի ձևավորել հայ քաղաքացու դրական կերպար, որպեսզի ունենա «պետություն, քաղաքական ինքնուրույն իշխանություն, անկախություն. սա է ազգային հարատևության» գրավականը<sup>3</sup>:

<sup>1</sup> «Մեծ ցավը», 1909 թ.:

<sup>2</sup> Ն. տ.:

<sup>3</sup> «Հայի ոգին», 1910 թ.:

*Կեղծիքը և ապատեղեկատվությունը* գրկում են հասարակությանը իրադարձությունները և ընթացիկ իրավիճակները ճիշտ ընկալելու, նաև՝ արդյունավետ որոշումներ կայացնելու հնարավորությունից: Թունանյանը մերժում է դերասանական խաղը կյանքում՝ ցույց տալով դրա հնարավոր բացասական հետևանքները. «Դերասանությունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են: Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածերն ու կեղծավորները»<sup>4</sup>: Չստակ գիտակցելով, որ կեղծիքը խեղաթյուրում է հանրույթի արժեհամակարգը, նսեմացնում «դերակատարներին», նրանց մարմնավորած «դերերը», ի վերջո «թատրոնը», որտեղ խաղում են, ասել է թե կյանքը՝ հրապարակախոսը պայքարում է մաքուր և անկեղծ միջավայրի ձևավորման համար, ինչը առաջադեմ հասարակություն կառուցելու հիմնական նախապայմանն է:

*Շինծու կարգախոսները*, որոնք ներարկվում են մարդու գիտակցության մեջ, ազդում նրա գործելակերպի վրա, այսօր լայնորեն կիրառվում են թե՛ հարձակողական, թե՛ պաշտպանական տեղեկատվական գործընթացներում: Դրանց վտանգը հատկապես մեծ է, երբ ժողովրդին համոզում են, թե հենց ինքն է այդպես մտածում: Տեղեկատվական անվտանգության մասնագետների մերօրյա ուսումնասիրություններին անձանոթ Թունանյանը զարմանալի ճշգրտությամբ կռահում է նման հետևանքների վտանգավոր ուղղվածությունը. «Խոսքն ընչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»: Ժողովուրդն այսպես է կամենում... Ժողովուրդը մեզ հետ է... Ժողովուրդը ձեզ կդատի... Ու՞ր ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»<sup>5</sup>: Մեծ գրողը ներկայացնում է թվացյալ իրական պատկեր ձևավորելու՝ կեղծարարների ճանապարհները. «Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետներին իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ»: Թունանյանն այս կերպ բացահայտում է կեղծարարների էությունը, անվստահությունն ձևավորում նրանց հանդեպ, ապա մատնանշում հնարավոր հետևանքները՝ քայքայում, «խախուտ ազգային գործեր»:

Կեղծիքի թեման շարունակական է Թունանյանի հրապարակախոսությունում: Նա խիստ մտահոգվում է, երբ արժանին խառնվում է անարժանին: Արտահայտվելով հայ իրականության մեջ առատորեն նշվող «Ջոբելյանների դեմ»՝ փորձում է բարձրացնել էական մի խնդիր. հասարակությունը պետք է մեծարի միայն արժանավորներին: Այլապես ձևավորվում են *կեղծ հերոսներ*, որոնք ստանում են կարևոր դերակատարություն, մինչդեռ ստվերում են մնում արժանիները: Շղթայական ռեակցիան շարունակվում է. վերջիններս դուրս են մնում կենսագործունեության

<sup>4</sup> «Անկեղծ չենք», 1907 թ.:

<sup>5</sup> Ն. տ.:

ուրորտներից՝ հասարակական-քաղաքական, գիտական, կրթական, մշակութային... Արդյունքում նվազում է հիշյալ ուրորտների կենսամակարդակը, հասարակության որակը, փոխվում են չափանիշները, խեղվում է ազգային նկարագիրը: Թունանյանն, իհարկե չի ներկայացնում այս ողջ շղթան, ընդամենը պնդում է. «Ժողովուրդը եթե չի հասկանում, հասկացողները էնքան խղճմտանք պետք է ունենան, որ նրա անհասկացողությունը ի չարը չգործ ածեն ու նրա տգետ գլուխը դարձնեն պատվանդան իրենց համար արհեստական բարձրություններ ստեղծելու և տխուր շփոթություն՝ արժանավորի և անարժանի, գեղեցիկի ու տգեղի, լավի ու վատի»:

Հասկանալի է, որ սա յուրօրինակ արգելակ է շղթայի հենց առաջին օղակից հետո:

Արատավոր մեկ այլ շղթայի հիմք է դրվում, երբ հասարակության մեջ բովանդակության փոխարեն առաջնային է դառնում ձևը, երբ եկեղեցին, ուսումնարանը, թատրոնը ընդամենը շենքեր են, հոգևորականները՝ երկարաշոր մորուքավորներ: Նշանակում է՝ ազգային մտածողությունը խեղաթյուրված է: Այս դեպքում, եթե անգամ դերերի բաշխումը իրականում ճիշտ է կատարված, մարդկային գիտակցության մեջ դրանք կանոնակարգման կարիք են զգում, ինչը պակաս վտանգավոր չէ: Թիֆլիսի հայ թատրոնի համար ճգնաժամային օրերին արտահայտված այս մտահոգությունը *ձևի և հոգու բանավեճը* լուծում է «նայել պատերից ներս»<sup>6</sup> մեզ համար խիստ այժմեական հրահանգով: Քանզի մեր իրականությունն այսօր ավելի, քան մեկ դար առաջ, հարուստ է համալսարաններով, բայց ոչ՝ գիտությամբ, թատրոններով, բայց ոչ՝ որակյալ դերասաններով, թանգարաններով, բայց ոչ՝ մարդաշատ, դպրոցներով, որոնց շրջանավարտները բուհ չեն ընդունվում առանց լրացուցիչ պարապմունքների...

Համահայկական տեղեկատվական միջավայրի ձևավորման խնդիրն այսօր դեռևս չիրագործված երազանք է: Արդի հայ լրագրագիտությունը զգում է վիրտուալ տարածքի պակաս, որը կաշխատի ողջ հայության համար՝ ամրացնելով կապը հայրենիքի և սփյուռքի, մայրաքաղաքի և շրջանների միջև: Թունանյանը պարբերաբար բարձրացնում է *ազգի միասնականության* անհրաժեշտության խնդիրը. «Կցանկանայինք, որ գրական այս տոնին (նկատի ունի Շիրվանզադեի հոբելյանը - Մ.Ա.) հայտնվեին և՛ ռուսահայը, և՛ տաճկահայը, և՛ Հնդկաստանի, Ամերիկայի ու Բուլղարիայի գաղթական հատվածները, և ոչ միայն այս տոնին, այլև միշտ, նման տոներին, և դա դառնար սովորություն»<sup>7</sup>: Եվ զարմանալին այն է, որ դեռևս մեկ դար առաջ հրապարակախոսը փնտրում էր մի տարածք, որտեղից պատասխան կստանա, «թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ու՞ր որոնենք էդ ոգին»<sup>8</sup>: Թունանյանը գիտեր, թե որտեղ

<sup>6</sup> «Ձևն ու հոգին», 1910 թ.:

<sup>7</sup> «Շիրվանզադեի հոբելյանը», 1910 թ.:

<sup>8</sup> «Հայի ոգին», 1910 թ.:

է պետք որոնել «էդ ոգին», բայց և վստահ էր, որ առանձին ուժերը՝ «ամեն տեսակ հասարակական և քաղաքական կուսակցություններն ու հոսանքները», չեն կարող քննարկել նման համազգային խնդիրներ, մինչդեռ «բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջությունը»: Հարյուր տարի հետո հայ տեսական միտքը պետք է սկսեր լրջորեն մտորել համահայկական տեղեկատվական միջավայրի ձևավորման մասին:

Պայքարելով կեղծ հերոսների դեմ՝ հրապարակախոսը կարևորում է ազգի առաջընթացն ապահովող իրական հերոսների մեծարումը: Նա գիտակցում է՝ հասարակությանն անհրաժեշտ են ընդօրինակման օբյեկտներ, *դրական խորհրդանիշեր*: Թումանյանը պարբերաբար անդրադառնում է մեր Մեծերին, գնահատում ըստ արժանվույն, պատկառանք ներշնչում նրանց կատարած գործերի հանդեպ, նույնը հորդորում անել մյուսներին. «Եվ արժե, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես բերի ու ջերմանա նրանց մշտավառ հոգիների անշեջ կրակով»<sup>9</sup>: Գեղեցիկ ու մեծ անունները հիշելի դարձնելու յուրօրինակ տարբերակ է հուշարձանների կառուցումը: Գրողը գիտակցում է, որ դրանք խորհրդանշելու են ոչ միայն պատկերող հերոսին, այլև նրա ապրած ժամանակաշրջանը, արած գործերն ու գաղափարները: Խաչատուր Աբովյանի արձանը նրա համար «հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ՝ Արարատի սրբազան դաշտում սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն, թե քանի սուր կա ցցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ, որ անլռելի պատմի աշխարհքին հայի տանջանքն ու տենչանքը»<sup>10</sup>: Սակայն որպեսզի «կատարյալ» լինի, Թումանյանին պակասում է ևս մեկ կոթող. «որ թերևս մի օր հայությունը կբարձրացնի Վանա Ծովի ափերին, Նարեկա ժայռերի վրա, որ նա էլ երկնքին պատմի, «ի խորոց սրտի» Աստուծո հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Ձայն Հառաչանաց Հեծութեան սրտի ողբոց աղաղակի»...»<sup>11</sup>: Հրապարակախոսը գիտակցում է երկու մեծերի ներքին ուժը, վստահ է, որ նրանց քարե արձաններն անգամ ի գորու են ոգեշնչել հայությանը, հայրենասիրական զգացմունքներ արթնացնել: Իսկ հայ ժողովուրդն այդ պահին ուներ դրա կարիքը:

Թումանյանը շարունակում է ընդլայնել իր մտորումների սահմանները: Նա պնդում է, որ այդ արձանները պետք է կանգնեցվեն ոչ թե հարուստների, այլ ժողովրդի միջոցներով, քանի որ, վստահ է՝ ժողովուրդը պետք է այդ *Մեծությունների հանդեպ ունենա սեփականության զգացում*, ի դեմս նրանց, վերագտնի իր արժանապատվությունը: Միայն այդ կերպ կարելի է ձևավորել համարժեք ոգի և մտածողություն հասարակության մեջ. «Նրա արձանը (նկատի ունի Խ. Աբովյանին - Մ.Ա.) պետք է կանգնի այն տեսակ երեք ռուբլիներով, որ այսօր նվիրաբերում է մի

<sup>9</sup> «Սայաթ-Նովայի շիրիմը», 1912 թ.:

<sup>10</sup> «Ամենքը միասին», 1910 թ.:

<sup>11</sup> Ն. տ.:

դառն աշխատավոր, մի Անուշավան Աբովյան իր սրտի անկեղծ հրճվանքի ու ազգային հպարտության հետ միասին»<sup>12</sup>: Գրողը տարբեր առիթներով անդրադարձել է հայ մյուս Մեծերին ևս (Սայաթ Նովա, Րաֆֆի, Միքայել Նալբանդյան, Շիրվանզադե, Ղազարոս Աղայան, Ծերենց...): Նրանց հանդեպ յուրօրինակ ձոներ են տարեդարձերին, մահվան տարելիցերին նվիրված հոդվածներն ու մահախոսականները:

Դրական խորհրդանիշեր ստեղծելու, Մեծերի հանդեպ սեփականության զգացում ձևավորելու գործառույթները առաջնահերթ են հատկապես այսօր, երբ անձնական նախասիրությունների դիտանկյունից են քննվում անգամ մշակութային, կրթական, գիտական իրողությունները, երբ անտեսվում են իրական արժեքները, դրանցով սերունդներ դաստիարակելու անհրաժեշտությունը:

Թունանյանի հրապարակախոսությունն, ընդհանուր առմամբ, միտված է *հային ու հայկականը մեծարելուն*: Սակայն նա տեսնում է նաև մեր իրականության մեջ առկա վատը, բացասականը: Երբեմն մատը դնում է ամենացավոտ վերքերի վրա, մատնանշում ամենախոցելի կողմերը: Այսօր, երբ խոսվում է հայամետ տեղեկատվական քաղաքականության մասին, շատերը կարծում են, թե պետք է լռել բացասականի մասին և նշել միայն դրականը: Հենց այս իմաստով են հաճախ բացասաբար ընկալվում «պաշտպանված տեղեկատվական միջավայր», «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունները: Այդպես չէ: *Առողջ քննադատությունը*, որը զերծ է թույնից և չի ձևավորում բացասական կարծրատիպեր, կարող է մեծապես օգնել սխալները ուղղելու և ավելի ինքնավստահ առաջ գնալու: Թունանյանի քննադատությունն այդպիսին է: Արձանագրելով, որ «մեր ամբողջությունը տառապում է ծանր ու խոր բարոյական հիվանդությունով»՝ նախանձ, չարություն, կեղծավորություն, նեղ թայֆայականություն՝ դրանց առկայությունը հրապարակախոսը պայմանավորում է արտաքին ազդակներով. «Ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում»: Փաստարկը հավաստի և տպավորիչ է դարձնում համեմատությունը՝ «Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. Հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում»<sup>13</sup>: Այս կերպ Թունանյանը մի կողմից խստորեն քննադատում է առկա բացերն ու թերի կողմերը՝ նպաստելով դրանց շտկմանը, մյուս կողմից, մեղքը բարդելով «բնության», «պատմության», «բարբարոս ժողովուրդների», «ուրիշ ընդհանուր հանգամանքների» վրա, հուշում է վերադառնալ դեպի ազգային մաքուր ակունքները:

Առանձնակի ուշադրության են արժանի թունանյանական այն հրապարակումները, որոնք վերաբերում են պատերազմական

<sup>12</sup> Ն. տ.:

<sup>13</sup> «Դառնացած ժողովուրդ», 1910 թ.:

իրադարձություններին: Հայ ժողովրդի համար դժվարին օրերին հրապարակախոսը կարողանում էր ճիշտ կողմնորոշվել: Նա ճշգրտորեն և ազդեցիկ արձանագրում է համատարած կոտորածները և բնաջնջումը, ինչը շատ կարևոր է պատմագրության, օտարին իրադարձությունների իրական պատկերը ներկայացնելու առումով: Միաժամանակ բողոքի ձայն է բարձրացնում և մեծ տերություններին կոչ անում սատար կանգնել իր ժողովրդին: Ի վերջո, ոգևորում է հայրենակիցներին՝ հեռու պահելով նրանց հուսալքումից. «Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով... Էսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները... փորձությունը պետք է տանենք արիությամբ...՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»<sup>14</sup>: Թումանյանը պարբերաբար բարձրացնում է հայկական հարցը մեզ համար նպաստավոր լույսի ներքո ներկայացնելու խնդիրը: «Հայաստանը պետք է խոսի վերջապես: Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ»<sup>15</sup>:

Այսպիսով, Թումանյանի հրապարակախոսությունը յուրովի անդրադարձ է հայությանը հուզող, մերօրյա մոտեցմամբ՝ տեղեկատվական անվտանգության մի շարք առանցքային հիմնախնդիրների, մասնավորապես՝

1. ինքնաճանաչողության խորքային ընկալում և ինքնագնահատում,
2. ազգային մտածողության սահմանների ընդլայնում,
3. հասարակության մեջ հայրենասիրական զգացումների արմատավորում,
4. մշակութային, գիտական հայրենական ներուժի հանդեպ վստահության ձևավորում,
5. մարդկանց գիտակցության մեջ հայանպաստ մտածելակերպի, պատկերացումների, միասնականության գաղափարի արմատավորում, դրական խորհրդանիշների ստեղծում,
6. կեղծիքի, շինծու կարգախոսների, հակահերոսների բացահայտում և պայքար նրանց դեմ,
7. օտար միջավայրում հայության հանդեպ նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորում:

Թումանյանն ապրում էր իր ազգի տառապանքներով ու հոգսերով, քայլում նրան համընթաց, սեփական մաշկի վրա զգում նրա ցավը: Այս ամենը գրողին թելադրում էր համարժեք մտածողություն և գործելակերպ: Սա է թումանյանական հրապարակախոսության հաջողության գաղտնիքը: Նման հրապարակումների պակաս արդի հայ լրատվական դաշտը շատ է զգում: Եվ այսօր, երբ այդ դաշտը բարեփոխող մեխանիզմները դեռևս մշակման փուլում են, կարելի է պարզապես

<sup>14</sup> «Հանգիստ ու լիքը հավատով», 1915 թ.:

<sup>15</sup> «Հայաստանը պետք է խոսի», 1917 թ.:

վերստին տպագրել Թումանյանի մի շարք հոդվածներ, որոնք իրենց մեջ կրուն են հիշյալ մեխանիզմների մանրակերտը, չգրված, սակայն խիստ որոշակի ռազմավարության արդյունք են: